


ПРАВО

Անցումային արդարադատության հասկացությունը, էությունը և բնութագրական հատկանիշները

Բայանդուրյան Արարատ Հ.

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0004-2740-1418>
ararat.bayanduryan@gmail.com

ՀՏԳ 342; EDN: HMIO SX

DOI: 10.58587/18292437-2026.1-41

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Անցումային արդարադատություն, կառուցակարգեր և ընթացակարգեր, քրեական արդարադատություն, լուստրացիա, նշարտության և վերթինգ, և արադարության հանձնաժողովներ, արմատական համակարգային բարեփոխումներ, զանգվածային իրավախախտումներ

Понятие, сущность и характерные особенности переходного правосудия

Баяндурян Арарат А.

*Аспирант, Институт философии, социологии и права Национальной академии наук РА,
Член палаты адвокатов РА (Ереван, РА)*

Аннотация: В данной статье автор подробно рассматривает сущность, понятие и характерные особенности переходного правосудия. Инструментами реализации переходного правосудия являются: судебные процессы, комиссии по правде и примирению, репарации, лустрация и другие процедуры.

Переходное правосудие представляет собой совокупность публично-правовых учреждений, институтов, комиссий и процедур, закрепленных законом, цель которых заключается не только в выявлении ранее совершенных массовых нарушений прав, но и в долгосрочной перспективе — в обеспечении верховенства права и защите прав и свобод человека

Переходное правосудие не только рассматривает ошибки прошлого, но и способствует формированию основ нового демократического управления, а также укреплению доверия и верховенства права в обществе. Оно обеспечивает интеграцию правовых, политических и социальных процессов, направленных на баланс интересов общества, государства и личности. С этой точки зрения, переходное правосудие является частью более широких социально-политических реформ, эффективность которых зависит от полноты и координации как правовых мер, так и практических механизмов реализации.

Ключевые слова и словосочетания: Переходное правосудие, структуры и процедуры, уголовное правосудие, лустрация, комиссии по установлению истины, проверке (веттингу) и справедливости, радикальные системные реформы, массовые нарушения прав

The Concept, Essence, and Characteristic Features of Transitional Justice

Bayanduryan Ararat H.

*PhD student of the Institute of Philosophy, Sociology and Law
of the National Academy of Sciences of the Republic of Armenia,
Member of the Chamber of Advocates of the RA (Yerevan, RA)*

Abstract. This article provides a detailed examination of the essence, concept, and characteristic features of transitional justice. The instruments for implementing transitional justice include judicial proceedings, truth and reconciliation commissions, reparations, lustration, and other procedures.

Transitional justice represents a system of publicly established legal institutions, bodies, commissions, and procedures, whose purpose is not only to uncover previously committed mass violations of rights, but also, in the long term, to ensure the rule of law and protect human rights and freedoms.

Transitional justice not only addresses past wrongs but also contributes to the establishment of the foundations of new democratic governance and the development of trust and the rule of law within society. It ensures the integration of legal, political, and social processes aimed at balancing the interests of the public, the state, and the individual. From this perspective, transitional justice represents a component of broader socio-political reforms, whose effectiveness depends on the comprehensiveness and coordination of both legal measures and practical implementation mechanisms.

Keywords & phrases: Transitional justice, mechanisms and procedures, criminal justice, lustration, truth and vetting, and justice commissions, radical systemic reforms, mass violations

«Անցումային արդարադատության» ուսումնասիրությունը արագ զարգացող ոլորտ է համեմատական քաղաքականության, իրավաբանության և դատաիրավական տեսության խաչմերուկում [1; 4]: Արևելյան Եվրոպայում հեղափոխությունների, հարավային Աֆրիկայում ժողովրդավարացման գործընթացում մարդու իրավունքների հարգման և պաշտպանության մշտապես աճող հեղինակությունը, առաջացրել է կամ առնվազն շատ տարածվել է ակադեմիական գրականությունը, որն ուսումնասիրում է զարգացող երկրներում անցումային վարչակազմի հետ կապված խնդիրները: Գրականությունը նպատակ է հետապնդում նույնացնել անցումային արդարադատության տարբեր իրավաբանական, բարոյական և ինստիտուցիոնալ հիմնախնդիրները: Օրինակի համար, արդյոք նոր վարչակարգը պետք է օգտագործի հետադարձ ուժ ունեցող քրեական և քաղաքացիական օրենքը՝ հին վարչակարգի պաշտոնյաներին և իրենց համագործակցողներին պատժելու համար: Արդյո՞ք այն պետք է ձեռնարկի լուստրացիայի (մաքրագերցման) արշավ՝ փորձ անելով անօրինականություն տեղադրել գրասենյակում կամ հին վարչակարգի այլ իրավաբանական անկարողությունները: Ինչպիսի՞ն պետք է լինի արդարադատության դերը՝ մինչև անցումը տեղի ունեցած քաղաքացիական իրավունքների ու սեփականության իրավունքների խախտումների վերաբերյալ:

Այս աշխատանքի առնչությամբ կատարել ենք երկու հարցադրումներ. առաջինը, անցումային արդարադատության տեսաբանները միասին սխալվում են վարվելով անցումային վարչակարգի հետ՝ իբրև իր մեջ պարունակվող սուբյեկտ, դրանով իսկ մերժելով վարչակարգի անցումների միջև համեմատությունների ու անալոգիաների համապատասխանությունը՝ մի կողմից, և կոնսոլիդացված ժողովրդավարություններով տեղի ունեցող անցումների մեծ բազմազանությունը, մյուս կողմից¹ [5, էջ 197]: Երբեմն այս սխալը առաջանում է իբրև բողոք, ինչպես երբ Չուդիթ Շկլարը գրում է Նյուրնբերգի և այլ անցումային դատերի մասին, որ «բոլոր անալոգիաները, որոնք վերցված են տեղական օրենքից... համոզիչ չեն»² [9, էջ 220]:

¹ Սանֆորդ Լեվիստոնը նմանապես նշում է ճշմարտության հանձնաժողովների քննադատության մասին, որոնք նա բեղմնավոր կերպով վերլուծում է ԱՄՆ-ի Գերագույն դատարանի պատշաճ ընթացող արտոդարադատության յուլիսի ներքո:

² «Մունիցիպալ օրենքին» Շկլարի հղումը կարող է առաջարկել, որ նրա դրույթները կիրառելի են միայն միջազգային և տեղական օրենքի միջև տարբերությանը: Համատեքստից պարզ է դառնում, սակայն, որ նրա դիտարկումն ընդլրում է և միջազգային-տեղական օրենքների տարանջատումը և անցումային վարչակարգերի և կոստիդացված իրավական համակարգերի միջև տարան-

Երբեմն այն ձեռք է բերում ակնհայտ, բայց անհրաժեշտ ենթադրության ձև այն փաստարկում, երբ Ջոն Էյսթերը ստուգում է անցումային արդարադատության «բարոյական առումը» առանց հղում կատարելու տեղական օրենքից ակնհայտ անալոգներին [1]: Այս տեսակետին հակառակ, պնդում ենք, որ իրավաբանական ու քաղաքական անցումները գտնվում են այն կոնտինիումում, որի վարչակարգի անցումները պարզապես վերջնակետերն են:

Միայն ամերիկյան ներքին իրավակարգի օրինակով դիտարկենք այն անցումները, որոնք տեղի են ունեցել սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Դրանցից կարելի է առանձնացնել, օրինակ, Քաղաքացիական պատերազմից հետո ձևավորված անցումը, ինչպես նաև իշխանության փոխանցման վիճահարույց փուլերը՝ 1800, 1876 և 2000 թվականներին: Այդ անցումային ժամանակաշրջանները ուղեկցվել են քրեական, քաղաքացիական և դատավարական իրավունքի փոփոխություններով, նոր սահմանադրական իրավունքների դատական ճանաչմամբ, ինչպես նաև տնտեսական և սոցիալական կարգավորման ու հարկային օրենսդրության վերափոխումներով կամ ընդհանուր իրավունքի զարգացման գործընթացներով [3, էջ 509]:

Այս բոլոր անցումները կարող են, և իրականում հաճախ էլ առաջացնում են, օրենքների հետադարձ ուժի կիրառման, պետական ծառայողների կարգավիճակի, կառավարման շարունակականության և փոխհատուցման հետ կապված հարցեր, որոնք ի հայտ են գալիս վարչակազմի փոփոխությունից հետո: Օրինակ՝ նախանցումային ժամանակահատվածում գույքից զրկման դիմաց փոխհատուցման խնդիրը բնորոշ է ինչպես վարչակարգային անցումներին, այնպես էլ վարչակազմերի փոփոխությանը:

Չնայած գոյություն ունեն էական տարբերություններ վարչակարգային անցումների և ներհամակարգային անցումների միջև, նկատելի են նաև տարբերություններ լայնամասշտաբ ներհամակարգային անցումների (ինչպիսիք են սահմանադրական փոփոխությունները) և փոքրածավալ ներհամակարգային փոփոխու-

ջատումը: Ընդհանուր առմամբ, Շկլարը անցկացնում է երկու տարանջատումներ, հավանաբար, քանի որ Նյուրնբերգը, նրա հիմնական կիզակետը, եղել է միանգամից և միջազգային և անցումային դատավարություն: Ուշադրություն դարձրեք այն լարվածությանը, որը առկա է Շկլարի մոտեցման, որ մունիցիպալ անալոգիաներն օգտակար չեն և նրա կենտրոնական թեզի միջև, որ օրենքի իշխանությունը կամ լեգալիզմը «ամբողջովին աստիճանի հարց է»: Եթե լեգալիզմը շարունակական փոփոխական է, չպետք է լինի ոչ մի կոնցեպտուալ անդունդ անցումային արդարադատության և սովորական արդարադատության միջև: Մենք համաձայն ենք Շկլարի հետ, որ լեգալիզմը՝ շարունակական փոփոխական է, մենք կավելացնենք, որ այդպիսին են նաև անցումային շրջանները:

թյունների (օրինակ՝ հարկային օրենսգրքի բարեփոխումները) միջև: Մինևույն ժամանակ ակնհայտ է, որ վարչակարգային անցումների և ներհամակարգային անցումների միջև տարբերությունները ավելի հիմնարար և հետևողական բնույթ ունեն, քան լայնամասշտաբ և փոքրածավալ ներհամակարգային անցումների տարբերությունները:

Ընդհանուր առմամբ, անցումային արդարադատության տեսաբանները, որոնք իրենց վերլուծությունները հիմնականում հիմնավորում են բարոյական փիլիսոփայության, քաղաքական տեսության և բարձր աստիճանի տեսականացված միջազգային իրավունքի վրա, հաճախ անբավարար են հաշվի առել կոնսոլիդացված ժողովրդավարությունների իրավական համակարգերի կառուցվածքային և գործառույթային առանձնահատկությունները: Նրանց մոտեցման թերությունը պայմանավորված է ոչ այնքան նորմատիվ կամ արժեքաբանական վերլուծության գերակայությամբ, որքան կայացած ժողովրդավարություններում «սովորական արդարադատության» վերաբերյալ ձևավորված ստերեոտիպային ընկալմամբ, ըստ որի իրավական նորմերը հիմնականում ունեն միայն հեռանկարային կիրառություն, իրավախախտումների դեպքում ապահովվում է լիարժեք փոխհատուցում, իսկ իրավական համակարգերի զարգացումը տեղի է ունենում առանց իրական անցումային ընդհատումների:

Մինչդեռ իրավակարգի զարգացումը սովորաբար ուղեկցվում է քաղաքական անցումներով, որոնք պայմանավորված են տնտեսական և տեխնոլոգիական վերափոխումներով, ինչպես նաև հասարակական և էլիտար արժեքային կողմնորոշումների փոփոխությամբ: Նման անընդհատականությունները օբյեկտիվորեն առաջացնում են անցումային իրավական հիմնախնդիրներ:

Իրավունքը մշակել է այդ հիմնախնդիրների կառավարման պրագմատիկ մեխանիզմների համակարգ՝ ուղղված սոցիալական կարգի պահպանմանը, իրավական ակնկալիքների կանխատեսելիության ապահովմանը և արդարադատության իրականացվածության հանրային ընկալման ամրապնդմանը: Սակայն այդ մեխանիզմները չեն կարող համարվել համապարփակ և լիովին բավարարող, քանի որ դրանց մի մասը կառուցված են տեսականորեն ոչ լիարժեք հիմնավորման վրա կամ հիմնվում են բացառիկ բնույթի արդարացումների տրամաբանությամբ: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ անցումային արդարադատությունը ձևավորում է իրավական գիտության ինքնուրույն ուղղություն, որը միավորում է նորմատիվ և ինստիտուցիոնալ վերլուծության հատուկ հայեցակարգային մոտեցումներ:

Մեր երկրորդ պնդումը հաջորդում է առաջինին: Եթե անցումային արդարադատությունը հանդիսանում է սովորական արդարադատության շարունակությունը, ոչ մի պատճառ չկա վարվել անցումային արդարադատության միջոցների հետ իբրև կասկած՝ բարոյական կամ ինստիտուցիոնալ հիմքերի վրա, եթե չենք համարի, որ կոնսոլիդացված ազատական ժողովրդավարությունների արդարադատության համակարգերը նույնպես կասկածելի են: Անցումային արդարադատության միջոցները սովորաբար ներառում են դատավարություններ և այլ գործընթացներ, որոնք նախատեսված են հին վարչակարգի պաշտոնյաներին ու համագործողներին պատմելուն կամ պաշտոնանկ անելուն, և սեփականության կամ գումարի անցումը՝ հին ռեժիմի գոհերին, ռեստիտուցիայի կամ վերականգնման միջոցով:

Անցումային արդարադատության գիտնական մեկնաբանների մոտ գերիշխում է անցումային արդարադատության միջոցներն ընդհանուր առմամբ մեղադրելու բնագրը՝ կամ այն հիմքերով, որ անցումային միջոցները հետադարձ ուժ ունեն և ուստի ակնհայտորեն ազատական չեն, կամ նմանատիպ պատճառաբանությամբ, որ նոր վարչակարգերը պետք է պահպանեն իրենց ներուժը բացառապես դեպի առաջ նայող միջոցների համար, որոնք ներդրում են կատարում պետականաշինությանը, տնտեսական աճին ու քաղաքական համաձայնությանը³ [2]: Այս մեկնաբանները կամ ամբողջությամբ մերժում են անցումային արդարադատության միջոցների կիրառման անհրաժեշտությունը, կամ դրանց վերագրում են զուտ նվազագույն՝ սիմվոլիկ նշանակություն: Սակայն նման դիրքորոշումը նույնքան անհամաչափ է, որքան կլինել քննադատաբար մերժել այն բոլոր գործիքները, որոնց միջոցով իրավական համակարգերը սովորաբար կառավարում են փոփոխության գործընթացները:

Մեր կարծիքով՝ ցանկացած իրավական համակարգում անցումային բնույթի հիմնախնդիրները անխուսափելի են: Հետադարձ ուժ ունեցող միջոցներն ինքնին կարող են կատարել դեպի ապագան ուղղված արդարացման գործառույթ, և, հետևաբար, հետադարձ բնույթի միջոցների ամբողջական մերժումը չափազանց ծայրահեղ լուծում է այնպիսի անցումային մարտահրավերների համար, որոնց բախվել են անգամ սահմանափակ թվով վարչակարգեր:

Ավելին, անցումային միջոցների նշանակությունը նվազեցնելու փորձը ինքնին կարող է դիտարկվել որպես անցումային ռազմավարու-

³ Հին վարչակարգի վերացումից և իր հետևից թողած քառսին պայքարելուց հետո, ունենք ավելի կարևոր հարցեր մտածելու համար, քան հետադարձ ուժ ունեցող արդարադատությունը

թյուն, որը, որպես կանոն, ունի սահմանափակ արդյունավետություն: Իհարկե, գոյություն ունեն ուժեղ պրագմատիկ պատճառներ՝ առարկելու առանձին անցումային սխեմաների, ծրագրերի կամ մեխանիզմների դեմ, և նման առարկությունները պետք է գնահատվեն կոնկրետ քաղաքական ու իրավական համատեքստում: Մակայն առկա չէ որևէ հիմնարար հիմք՝ ամբողջ անցումային արդարադատության գաղափարի նկատմամբ սկզբունքային կասկած ձևավորելու համար:

Յուրաքանչյուր անցումային շրջան բաժանում է ստեղծում հին վարչակարգի ու նոր վարչակարգի միջև: Հին վարչակարգի գոհերը հաճախ պահանջում են արդարադատություն նրանց դեմ, ում իրենք վերաբերվում են իբրև հանցագործների: Հանցագործները ներառում են հին վարչակարգի պաշտոնատար անձանց ինչպիսիք են՝ բռնաճնշողները, կուսակցությունների առաջնորդները, դատավորները, բյուրոկրատները և այլն և համագործակցողներ՝ քաղաքացիական բնակչության շարքում /ներառյալ պաշտոնյաներն ու սովորական քաղաքացիները, ովքեր դավաճանել են իրենց ընկերներին ու հարևաններին/: Չոհերը պնդում են, որ իրենք անարդարացիորեն զրկվել են աշխատանքից, կրթության հնարավորություններից ու գույքից: Նոր վարչակարգի պաշտոնյաները, ովքեր հաճախակի իրենք են հանդիսանում հին վարչակարգի գոհեր, պետք է որոշեն, ինչպես պատասխանել անցումային արդարադատության այս կոչերին:

Անցումային արդարադատության գործիքները ներառում են դատավրական փոփոխությունների համալիր ներդրում, ճշմարտության հանձնաժողովների ստեղծում, ռեպարացիաներ: Մյս գործիքները հանդիսանում են անցումային քաղաքականության մի մասը, որը ներառում է տնտեսական, քաղաքական և իրավաբանական բարեփոխությունը: Հաճախակի, սակայն ոչ միշտ, անցումային արդարադատության գործիքները բախվում են քաղաքականության այլ նպատակների հետ: Օրինակ՝ գտման (յուստրացիայի) գործընթացները կարող են նպաստել քաղաքական բարեփոխմանը՝ սահմանափակելով նախորդ վարչակարգի ներկայացուցիչների ազդեցությունը, սակայն միաժամանակ կարող են հակասել նույն այդ բարեփոխման նպատակներին՝ նոր պետական կառույցը զրկելով փորձառու և հմուտ վարչարարներից: Նույնիսկ այն դեպքում, երբ անցումային արդարադատության գործիքը համահունչ է քաղաքական բարեփոխման նպատակներին, այն կարող է հակասել այլ առաջնահերթությունների, մասնավորապես՝ տնտեսական բարեփոխմանը: Այսպես, ռեպարացիաները ծառայում են արդարադատության իրականացմանը՝ փոխհատուցե-

լով նախկին վարչակարգի գոհերին, և միաժամանակ կարող են նպաստել քաղաքական վերափոխմանը՝ սահմանափակելով նոր կարգին սպառնացող խմբերի ռեսուրսները: Մակայն դրանք կարող են նաև չլուծել գույքային իրավունքների հարցերը և խոչընդոտել տնտեսական բարեփոխմանը՝ առաջացնելով նոր սոցիալական դժգոհություններ գործող սեփականատերերի շրջանում:

Այն, թե արդյոք անցումային արդարադատության գործիքները հակասում են քաղաքականության այլ նպատակներին, մասամբ պայմանավորված է նրանով, թե ինչպես է ընկալվում անցումային արդարադատության բովանդակությունն ու առաքելությունը: Գիտական գրականության մեջ հետազոտողները, որպես կանոն, անցումային արդարադատությունը սահմանում են որպես անցյալին ուղղված մոտեցում, որի նպատակն է՝

ա) փոխհատուցել կոպտագույն իրավախախտումների գոհերին,

բ) վերադարձնել կամ բռնագանձել այն գույքը, որը ձեռք է բերվել ապօրինի եղանակով,

գ) բացահայտել ճշմարտությունը անցյալի իրադարձությունների վերաբերյալ:

Այս ըմբռնումը անցումային արդարադատությունը ներկայացնում է նախևառաջ որպես արդարության վերականգնման մեխանիզմ, որը կենտրոնացած է նախկին իրավախախտումների հետևանքների հաղթահարման վրա:

Մակայն անցումային արդարադատությունը կարող է ընկալվել նաև դեպի ապագան ուղղված տրամաբանությամբ՝ որպես արդյունավետ գործիք հասարակությանը կորցրած ինստիտուցիոնալ ավանդույթներն ու վստահությունը վերականգնելու համար, ինչպես նաև՝ նախկին պաշտոնյաներին քաղաքական և տնտեսական ազդեցությունից զրկելու նպատակով, որը նրանք կարող էին օգտագործել բարեփոխումների գործընթացը խոչընդոտելու համար: Միաժամանակ անցումային արդարադատության միջոցները կարող են ծառայել որպես ազդակ՝ գույքային իրավունքների երաշխավորման, շուկայական տնտեսության կայացման, ժողովրդավարական հաստատությունների ամրապնդման, ինչպես նաև սահմանադրական նախադեպերի ձևավորման համար, որոնք կարող են զերծ պահել ապագա առաջնորդներին նախկին վարչակարգի սխալների կրկնությունից:

Ուստի, եթե արդարադատության «դեպի անցյալ նայող» հայեցակարգերի կողմնակիցները անցումային արդարադատության միջոցները դիտարկում են որպես ցանկալի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք խոչընդոտում են բարեփոխումները, ապա «դեպի ապագան նայող» հայեցակարգերի կողմնակիցները անցումային արդարադատության միջոցներն ու

քաղաքականության նպատակները դիտարկում են որպես փոխարացնող և փոխադարձաբար ուժեղացնող գործոններ:

Անցումային արդարադատության գործիքները դրսևորվում են բազմազան ձևերով: Դրանցից մեկը հրապարակային դատավարությունն է, որի ընթացքում նախկին վարչակարգի հանցագործները ենթարկվում են քրեական հետապնդման՝ ապահովելով նրանց իրավունքը պաշտպանության, փաստաբանի ներգրավման, խաչաձև հարցաքննության և այլ դատավարական երաշխիքների իրացման համար:

Ցուցադրական դատավարությունների մի կողմից և սովորական քրեական կամ քաղաքացիական դատավարությունների մյուս կողմից ընկած հարթությունում, անցումային արդարադատության նպատակով իրականացվող դատավարությունները, որպես կանոն, զբաղեցնում են միջանկյալ դիրք: Դրանք միաժամանակ միտված են թե՛ իրավական պատասխանատվության իրականացմանը, թե՛ հանրային վստահության վերականգնմանը:

Անցումային արդարադատության մեկ այլ կարևոր գործիք են ճշմարտության բացահայտման հանձնաժողովները, որոնց հիմնական նպատակն է պարզել հանցագործների կամ նրանց հանցակիցների ինքնությունը, ինչպես նաև բացահայտել նրանց գործունեության բնույթը: Ի տարբերություն դատական գործընթացների՝ այս հանձնաժողովները սովորաբար չեն կենտրոնանում պատժի կիրառման վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ գործ ունենք առանձնապես ծանր կամ հասարակական մեծ հնչեղություն ունեցող հանցագործությունների և դրանց կատարողների հետ:

Այս դատավարություններում պաշտպանողի դեմ կիրառված օրենքը մեծապես տարբերվում է: Դա կարող է լինել նոր օրենք, որը կիրառվում է հետադարձ ուժով, հին օրենքը, որը եղել է հին վարչակարգի օրենսդրական համակարգում սակայն երբեք չի գործադրվել, միջազգային օրենքը, որը ձևականորեն հարգվել է հին վարչակարգի կողմից, սակայն չի ներգրավվել ազգային իրավական համակարգում, կամ հին օրենքը, որն ուժի մեջ է մտել, սակայն ոչ հին վարչակարգից հանցագործների դեմ: Որոշ հետանցումային կառավարություններն օգտագործել են հետադարձ ուժի անմիջական գործիքը՝ ընդարձակելով սահմանափակումների ուժը կորցրած դրույթները:

Սովորաբար քրեական պատիժը կիրառվում է հանցագործների նկատմամբ, սակայն անցումային արդարադատության շրջանակում առանձնահատուկ նշանակություն ունեն գտման (vetting) և լուստրացիայի մեխանիզմները: Չտուժը տեղի է ունենում այն դեպքում, երբ նախկին վարչակարգի հետ կապված անձինք

գրկվում են պետական կամ հանրային պաշտոն զբաղեցնելու իրավունքից՝ դատական ընթացակարգի միջոցով կամ առանց դրա:

Լյուստրացիան, ինչպես օրինակ կիրառվել է Չեխոսլովակիայում 1989 թվականի հեղափոխությունից հետո⁴, ենթադրում է նախկին վարչակարգի հետ համագործակցած անձանց հրապարակային բացահայտում, որոնք այսպես հայտնի չէին որպես այդպիսիք, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածի ընթացքում պետական պաշտոն զբաղեցնելու արգելքներ [7]:

Անցյալի հանցագործությունների պաշտոնական ընդունմանը միտված գտման և լուստրացիայի որոշ մոդելներ ներառում են նաև պայմանական համաներման տարրեր: Մասնավորապես, մի շարք պետություններում, այդ թվում՝ Հարավային Աֆրիկայում, համաներմուը կիրառվել է որպես պայման՝ հանցագործության լիարժեք խոստովանության և ճշմարտության բացահայտման դիմաց [10]:

Ինչ է անցումային արդարադատությունը: Այն չի սահմանափակվում քաղաքական կամ տնտեսական գործարքների պարզապես հաջող իրականացմամբ, այլ ենթադրում է իրավական, քաղաքական և տնտեսական համակարգերի համապարփակ անցում, որը պետք է համահունչ լինի ազատական և ժողովրդավարական արժեքների ու խոստումների հետ:

Նման վարչակարգային փոփոխությունը պարտավոր է իրականացվել՝ հարգելով մարդու հիմնարար իրավունքները և նվազագույնի հասցնելով բռնության ու սոցիալական անկայունության ռիսկերը: Անձինք պետք է կամ վերականգնեն իրենց գույքային իրավունքները, կամ ստանան արդար փոխհատուցում կրած կորուստների դիմաց: Պաշտոնատար անձինք և նախկին վարչակարգի աջակիցները չպետք է ենթարկվեն կամայական հետապնդումների իրավաչափ գործողությունների համար, նրանց նկատմամբ չպետք է կիրառվեն նվաստացուցիչ կամ ոչ արդար դատավարական մեթոդներ, և պետք է ապահովվի նրանց մասնակցությունը նոր հասարակական կարգին՝ որպես իրավահավասար քաղաքացիներ:

Միևնույն ժամանակ, նոր վարչակարգի աջակիցները չպետք է օգտագործեն անցումային գործընթացը անձնական շահերի համար կամ մանիպուլացնեն այն քաղաքական կամ տնտեսական առավելություններ ձեռք բերելու նպատակով:

⁴ Չեխոսլովակիան բաժանվել է Չեխիայի Հանրապետությանն ու Սլովակիային 1993 թվականին: Երբ անդրադառնում ենք Չեխոսլովակիայում ուժի մեջ մտած օրենքներին, որոնք կիրառվել են Չեխիայի Հանրապետության նկատմամբ, անդրադառնում ենք կամ Չեխոսլովակիային կամ Չեխիայի Հանրապետությանը կանխած համատեքստից:

«Անցումային արդարադատությունը» օրենքով ստեղծվելիք հանրային-իրավական ինստիտուտների, հաստատությունների, ընթացակարգերի միասնական-ամբողջական կառուցակարգ (մեխանիզմ) է, որի հիմնական նպատակն է ոչ միայն բացահայտել և պատասխանատվության ենթարկել նախկին ռեժիմների ժամանակ սխտեմատիկաբար կատարված զանգվածային հանցագործությունների հեղինակներին (կազմակերպիչներին, կատարողներին, ֆինանսապես աջակցողներին և այլն), այլև վերականգնել մարդկանց ունեցած իրավունքները և ազատությունները ու հեռանկարում երաշխավորել իրավունքի (օրենքի) գերակայությունը, ժողովրդավարական արժեքները և մարդու ու քաղաքացու բնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը, ինչը չի կարող լիարժեք իրականացնել նախկին քաղաքական ռեժիմներում ձևավորված դատական իշխանության մարմինները՝ առանձին-առանձին գործերով և միմյանց հակասական որոշումներով, ինչպես վկայում է վերջին շրջանում դատական պրակտիկան:

Անցումային արդարադատությունը միջոցառումների համալիր է, որը կապված է նախկինում կատարված մարդու իրավունքների համակարգային և զանգվածային խախտումների հետ, որը գոհերին ապահովում է խախտումների փոխհատուցում, ինչպես նաև ստեղծում է առաջնահերթություններ և օժանդակում քաղաքական համակարգերի, կոնֆլիկտների ու այլ պայմանների ձևափոխմանը, որոնք հնարավոր է, որ ընկած են եղել չարաշահումների հիմքում:

Անցումային արդարադատությունը, անցյալ ավտորիտար ռեժիմի կողմից իրականացված համակարգային և զանգվածային իրավախախտումների բացահայտման համատեքստում, ինչպես արդեն նշվել է, հետապնդում է երկու հիմնարար նպատակ:

Առաջին նպատակը ժողովրդավարության, հասարակական հաշտեցման և կայուն խաղաղության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու ամրապնդումն է:

Երկրորդ նպատակը համապատասխան քաղաքական և իրավական երաշխիքների հաս-

տատումն է, որոնք կոչված են կանխելու լայնածավալ և համակարգված իրավախախտումների կրկնությունը ապագայում:

Այս երկու նպատակների իրագործման համար անցումային արդարադատության մեխանիզմները հաճախ համադրում են քրեական, վերականգնողական և սոցիալական արդարության տարրեր՝ ձևավորելով համապարփակ պատասխան անցյալի ծանր խախտումներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Elster J.** *Moral Dilemmas of Transitional Justice.* – Oslo: Centre for Development and the Environment, University of Oslo, 2002.
2. *Jon Elster, On Doing What One Can, E. EUR. CONST. REV., Spring 1992,*
3. **Kaplow Louis.** An Economic Analysis of Legal Transitions // *Harv. L. Rev.* – 1986. – Vol. 99. – P. 509–515.
4. **Koreman Megan.** *The Expectation of Justice: France, 1944–1946.* – Durham, NC: Duke University Press, 1999. – 340 p.
5. **Levinson S.** *Trials, Commissions, and Investigating Committees: The Elusive Search for Norms of Due Process // Truth v. Justice: The Morality of Truth Commissions / ed. by R. I. Rotberg, D. Thompson.* – Princeton: Princeton University Press, 2000. – P. 211–212.
6. **Offe C.** *Varieties of Transition: The East European and East German Experience.* – Cambridge: Polity Press, 1997. – 220 p.
7. **Pehe J.** *Parliament Passes Controversial Law on Vetting Officials // Report on Eastern Europe.* – 1997. – Oct. 25
8. **Pogany I.** *Righting Wrongs in Eastern Europe.* – Manchester: Manchester University Press, 1997. – 226 p
9. **Shklar J. N.** *Legalism: Law, Morals, and Political Trials.* – Cambridge (MA): Harvard University Press, 1986. – 167 p.
10. **Slye R. C.** *The Legitimacy of Amnesties Under International Law and General Principles of Anglo-American Law: Is a Legitimate Amnesty Possible? // Va. J. Int'l L.* – 2002. – Vol. 43. – P. 173–194.

Շժանա / Հանձնվել է՝ 22.01.2026
 Рецензирована / Գրախոսվել է՝ 29.01.2026
 Принята / Ընդունվել է՝ 05.02.2026